

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՍԿՈ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

ԿԱՍԿՈ ապահովագրությամբ փոխհատուցվում են Ձեր ավտոմեքենային հասցված ֆիզիկական վնասները և կորուստը՝ անկախ նրանից, թե ով է հանդիսանում պատահարի մեղավոր կողմը:



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «ՌԵՍՈ» ԱՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող. 62 շ., 93-93/1
Հեռ.՝ (+374 60) 50 57 57
Կայք՝ www.reso.am



ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ապահովագրության պայմաններին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ «ՌԵՍՈ» ԱՓԲԸ Խորհրդի կողմից 24.08.2020թ.-ին հաստատված Ցամաքային տրանսպորտային միջոցների ապահովագրության պայմաններում այցելելով ապահովագրական ընկերության պաշտոնական կայքը:



ՈՐՏԵՂ Է ԳՈՐԾՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ և ԼՂՀ



ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության վկայագիրը կնքվում /վերականգնվում է վարկի գործողության ողջ ժամկետում բացառությամբ վարկային պայմանագրով սահմանված դեպքերի:



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ

Կարգավորվում է Ձեր վարկային պայմանագրով և/կամ հրապարակային օֆերտայով սահմանված պայմաններով:



ԼԻԱԶՈՐՎԱԾ ՎԱՐՈՐԴՆԵՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ

Ցանկացած անձ, ով ունի տվյալ ավտոմեքենայի վարման համապատասխան դասի վարորդական իրավունք:



ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ

Համաձայն վարկային պայմանագրի՝ Ձեր կողմից ապահովագրավճար չի վճարվում:



ԻՆՉ ՔԱՅԼԵՐ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԶԵՌԱՐԿԵԼ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

- Պատահարի տեղի ունենալուց կամ հայտնի դառնալու պահից հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 40 րոպեի ընթացքում անհրաժեշտ է կանգահարել (+374 60) 50 57 57 հեռախոսահամարով,
- Հրդեհի կամ այրվածի դեպքում կանգահարել ԱԻՆ 101 համարով, ճՏՊ-ի դեպքում՝ ճՈ 177 կամ 010 522 763 համարով, երրորդ անձանց կողմից հակաօրինական գործողությունների և առևանգման դեպքում՝ Ոստիկանություն 102 համարով,
- Չտեղաշարժել ավտոմեքենան մինչև ապահովագրական ընկերության և ՀՀ ճՈ-ի ժամանումը, գրանցել ճՏՊ-ի մասնակից ավտոմեքենաների տվյալները,

- Առանց ապահովագրական ընկերության համաձայնության ոչ մի դեպքում չընդունել Ձեր մեղքը՝ լրիվ կամ մասնակի և չվերցնել ոչ մի պարտավորություն Ձեզ վրա:

ՈՐՔԱՆ Է ՀՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ

- Ֆիզիկական վնասի դեպքում ապահովագրական գումարի 1%, սակայն ոչ պակաս քան 20,000 ՀՀ դրամ: Եթե պատահարի պահին վարորդի վարորդական փորձը 3 տարուց ցածր է կամ նրա տարիքը 21-ից ցածր է, ապա չհատուցվող գումարը կրկնապատկվում է,
- Առևանգման կամ ավտոմեքենայի ամբողջությամբ կորստի դեպքում ապահովագրական գումարի 5%, իսկ հակաառևանգման ապրանշանային համակարգի առկայության դեպքում 3%:

ՈՐՈՆՔ ԵՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Պատահարի մասին ապահովագրական ընկերությանը տեղեկացնելուց հետո 30 (առևանգման դեպքում 3) աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական ընկերության գրասենյակում լրացնել հայտային դիմումը կամ լրացված դիմումի լուսապատճենը/լուսանկարն ուղարկել claims@reso.am էլ. հասցեին,
- Ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը,
- Սպասել ապահովագրական ընկերության հետագա ցուցումներին,
- Հատուցման կամ մերժման որոշումը կայացվում է հայտի կարգավորման համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում,
- Հատուցման գումարը վճարվում է հատուցման որոշում կայացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

ՈՐ ԴԵՊՔԵՐԸ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ

Ցանկացած պարագայում, հատուցման ենթակա չեն այն վնասները, որոնք առաջացել են հետևյալի արդյունքում.

- Ավտոմեքենան ոչ անձնական նպատակներով (օրինակ՝ որպես տաքսի, ուսուցման, վարձակալության և այլն) շահագործելու,
- Սահմանված ժամկետում ապահովագրական ընկերությանը և համապատասխան իրավասու մարմիններին ապահովագրական պատահարի մասին չտեղեկացնելու,
- Ալկոհոլի կամ թմրանյութերի, ինչպես նաև տոքսիկ կամ սեդուկտիվ նյութերի ակդեցության տակ ավտոմեքենան շահագործելու,
- Ապահովագրության պայմաններով սահմանված պարտավորություններից որևէ մեկը խախտելու, ինչի արդյունքում հնարավոր չի եղել որոշել ապահովագրական պատահարի հանգամանքները կամ պատճառը կամ հնարավոր մեղավոր անձանց կամ վնասի չափը,
- Լիպորված տիրապետողի, ավտոմեքենայի սեփականատիրոջ կամ ուղևորի կանխամտածված գործողությունների հետևանքով,
- Ռազմական գործողությունների/հնարքների/միջոցառումների, քաղաքացիական պատերազմի, ապստամբությունների, ժողովրդական հուլումների, հեղափոխությունների, ահաբեկչությունների կամ դրանց փորձերի,
- Ավտոմեքենայի շահագործման կանոնների խախտմամբ այն վարելու կամ ոչ համապատասխան ավտոպահեստամասերի, նյութերի կամ վառելիքի օգտագործմամբ նրա շահագործման,
- Անսարք ավտոմեքենան վարելու, որի շահագործումը արգելվում է ՀՀ Նորմատիվ ակտերով կամ ավտոմեքենան արտադրող գործարանի կողմից նախատեսված շահագործման կանոնների խախտմամբ,
- «ՌԵՍՈ» ԱՓԲԸ Խորհրդի կողմից 24.08.2020թ.-ին հաստատված Ցամաքային տրանսպորտային միջոցների ապահովագրության պայմաններով նախատեսված այլ դեպքերում:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

Ապահովագրական ընկերության հատուցման որոշման հետ համաձայն չլինելու դեպքում Դուք իրավունք ունեք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, Կենտրոնական բանկ, Դատարան/Արբիտրաժային դատարան: